ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ, ԹԻՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: Սկսած 2019 թվականից իրականացվել են աշխատանքներ ապահովագրական ծածկույթի գնահատման, հիմնական ծառայությունների փաթեթի որոշման, համակարգում ըստ բնակչության առանձին խմբերի ծախսերի որոշման ուղղությամբ: 2019 թվականին հանրային քննարկման է ներկայացվել ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառվել է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փուլային ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է առողջապահության ֆինանսավորման խորհրդատվության իրականացում համապատասխան փորձագետի ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով առողջապահության տնտեսագիտության, ֆինանսավորման և հաշվապահական հաշվառման հարցերով խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Առողջության Համապարփակ Ապահովագրության ներդրման հետ կապված առողջապահության տնտեսագիտության, ֆինանսավորման, կառավարման, հաշվապահական հաշվառման հարցերով խորհրդատվության տրամադրում, այդ թվում

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում առողջապահության ֆինանսավորման հետ կապած նորմերի, ձևակերպումների, սահմանումների տրամադրում, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկների տրամադրում, դրանց իրավական ուղեկցմանը աջակցում:

2. Հիմնադրամի կանոնադրության նախագծի, Հիմնադրամի ֆինանսական գործառություններ իրականացնող ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերի, Հիմնադրամի աշխատակիցների պաշտոնների նկարագրերի, Կառավարման խորհրդին կից կոմիտեների գործունեությունը կարգավորող փաստաթղթի, կոմիտեների կողմից խորհրդատուների ընդգրկման կարգում առողջապահության ֆինանսավորման առանձնահատկություններով պայմանավորված սկզբունքների ամրագրման ձևաչափերի վերաբերյալ խորհրդատվություն:
3. Հիմնադրամի ձևավորման, վերջինիս ֆինանսական գործառույթների սահմանման դեպքում առողջապահության նախարարության գործառույթների հնարավոր վերանայման վերաբերյալ առաջարկների ներկայացում:
4. Առողջության համապարփակ ապահովագրության շրջանառու միջոցների ձևավորման, ռեզերվային ֆոնդերի ստեղծման և ֆինանսական միջոցների կառավարման, ապահովագրական վճարների կատարման մեխանիզմների նկարագրության, դրանց վերահսկման մոդելների վերաբերյալ առաջարկների ներկայացում, դրանց կանոնակարգումը առավել արդյունավետ իրականացնելու նպատակով հատուկ ենթաօրենսդրական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
5. Հիմնադրամի աուդիտի (ներքին և արտաքին) իրականացման սկզբունքներն ամրագրող փաստաթղթի կազմման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:
6. Հիմնադրամի կողմից հանրային հաշվետվողականության, ապահովագրվածների հաշվետվության և այլ ֆինանսական բնույթի հաշվետվությունների ձևաչափերի մշակում, դրանց տրամադրման ժամկետների, պատասխանատուների ամրագրմամբ:
7. ԱՀԱ ներդրման նպատակներին համահունչ տեղեկատվական համակարգերի, այդ թվում նաև ծառայությունների փաթեթների ծախսերի և առողջապահական ծառայությունների հաշվարկման գործիքների մշակման ընթացքի խորհրդատվություն:
8. Առողջապահական ծառայությունների ռազմավարական գնման, բժշկական կազմակերպությունների ընտրության, վերջիններիս փոխհատուցման մեխանիզմների վերանայման վերաբերյալ խորհրդատվություն:
9. Առողջապահական ծառայությունների գների, ծախսերի նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակման/վերանայման աշխատանքների իրականացում:

10. ԱՀԱ ներդրման միջոցառումներով նախատեսված աշխատանքներում ներգրավված փորձագետների, խորհրդատուների աշխատանքների համակարգում, նրանց կողմից ներկայացվող հաշվետվությունների, փաստաթղթերի բովանդակության վերահսկում և աշխատանքների ընթացքի վերաբերյալ պարբերական տեղեկատվության ներկայացում ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի ղեկավարին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Խորհրդատուի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. ԱՀԱ օրենքում և այլ օրենքներում հանրային ֆինանսների կառավարման կամ հիմնադրամի ֆինանսական միջոցների կառավարման հետ կապած նորմերի, ձևակերպումների, սահմանումների, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորող փաստարկների տրամադրում մինչև մարտի 31-ը,
2. Առողջության համապարփակ ապահովագրության հիմնադրամի ծախսերի նախահաշվի օրինակելի տարբերակի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում մինչև մարտի 31-ը:
3. Հիմնադրամի կանոնադրության նախագծի, Հիմնադրամի ֆինանսական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերի, այդ ստորաբաժանումների աշխատակիցների պաշտոնների նկարագրերի, Կառավարման խորհրդին կից հանձնաժողովների գործունեությունը կարգավորող փաստաթղթի, հանձնաժողովների կողմից ընդգրկվող առողջապահության ֆինանսավորման խորհրդատուների գործառույթները նկարագրող հիմնական ձևակերպումների տրամադրում մինչև հունիսի 30-ը:
4. Հիմնադրամի ձևավորման, վերջինիս ֆինանսական գործառույթների սահմանման դեպքում առողջապահության նախարարության գործառույթների հնարավոր վերանայման վերաբերյալ առաջարկների ներկայացում մինչև հուլիսի 31-ը:
5. Առողջության համապարփակ ապահովագրության շրջանառու միջոցների ձևավորման, ռեզերվային ֆոնդերի ստեղծման և ֆինանսական միջոցների կառավարման, ապահովագրական վճարների կատարման մեխանիզմների նկարագրության, դրանց վերահսկման մոդելների առաջարկների մշակման, դրանց կանոնակարգումը առավել արդյունավետ իրականացնելու նպատակով հատուկ ենթաօրենսդրական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկների ներկայացում, մինչև հուլիսի 31-ը:

6. Հիմնադրամի աուդիտի (ներքին և արտաքին) իրականացման սկզբունքներն ամրագրող փաստաթղթի կառուցվածքի և բովանդակության վերաբերյալ առաջարկության ներկայացում, մինչև հուլիսի 30-ը:
7. Հիմնադրամի կողմից օգտագործված ֆինանսական միջոցների, ֆինանսական վիճակի, բյուջեից կատարված ծախսերի վերաբերյալ տվյալների ցանկի, ապահովագրվածների ծախսերի և հատկացված գումարների, այլ ֆինանսական բնույթի տվյալների, հաշվետվությունների ձևաչափերի վերաբերյալ առաջարկների ներկայացում, մինչև հուլիսի 30-ը:
8. ԱՀԱ ներդրման նպատակներին համահունչ տեղեկատվական համակարգերի գործունեության հիմնական սկզբունքները նկարագրող փաստաթղթի, ծառայությունների փաթեթների ծախսերի հաշվարկման ակտուարական մոդելը նկարագրող փաստաթղթի և առողջապահական ծառայությունների գների հաշվարկման գործիքների մշակման նպատակով բիզնես գործընթացները նկարագրող փաստաթղթի տրամադրում մինչև ապրիլի 30-ը:
9. Առողջապահական ծառայությունների ռազմավարական գնման, բժշկական կազմակերպությունների ընտրության, վերջիններիս փոխհատուցման մեխանիզմների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում մինչև օգոստոսի 31-ը:
10. Առողջապահական ծառայությունների գների, ծախսերի նորմատիվների հաշվարկման մեթոդաբանության մշակման/վերանայման վերաբերյալ առաջարկների ներկայացում մինչև օգոստոսի 31-ը:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1-ին կետի ներառմամբ հաշվետվությունը և օրենքում այլ օրենքներում առաջարկվող ձևակերպումներով փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի մարտի 15-ը:

2-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և ծախսերի նախահաշվի վերաբերյալ առաջարկությունները պետք է ներկայացվեն մինչև 2023 թվականի մարտի 15-ը:

3-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հունիսի 15-ը:

4-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը:

5-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը:

6-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը:

7-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի հուլիսի 15-ը:

8-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի ապրիլի 15-ը:

9-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը:

10-րդ կետի ներառմամբ հաշվետվությունը և փաստաթղթերի փաթեթը պետք է ներկայացվի մինչև 2023 թվականի օգոստոսի 15-ը:

Բացի վերը նշված աշխատանքներից, խորհրդատուն ըստ անհրաժեշտության, ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Խորհրդատուն նաև պետք է իրականացնի ԱՀԱ ներդրման միջոցառումներում ներգրավված տեղային և միջազգային փորձագետների և խորհրդատուների կողմից իրականացվող այլ աշխատանքների համակարգումը, դրանց ամփոփումը և ներկայացումը ԱՀԱ ներդրման աշխատանքների կազմակերպման նպատակով ձևավորված ներգերատեսչական և միջգերատեսչական խմբերին կամ նրանց ղեկավարներին:

Խորհրդատուն նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի նախագահի կողմից ներկայացված անհրաժեշտության:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սույն աշխատանքի նկարագրի շրջանակներում աշխատանքները պետք է իրականացվեն մինչև 31.08.2023 թվականը՝ երկարաձգման հնարավորությամբ:

ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

- Առնվազն բարձրագույն կրթություն տնտեսագիտության, ֆինանսների, հաշվապահական հաշվառման բնագավառում,
- Առնվազն 15 տարվա փորձառություն առողջապահության ֆինանսավորման բարեփոխումների, այդ թվում ֆինանսավորման մեխանիզմների ներդրմանը մասնակցություն
- Առնվազն 15 տարվա փորձառություն առողջապահության ֆինանսական տեղեկատվական համակարգերի նախագծման, ներդրման աջակցման բնագավառում
- Առնվազն 15 տարվա փորձ հանրային ֆինանսների կառավարման, ծրագրային բյուջետավորման, ՄԺԾԾ և այլ ռազմավարական ծրագրերի ֆինանսական գնահատման բնագավառում
- պետական կառավարման համակարգերի հետ համագործակցելու կամ պետական կառավարման մարմնում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու առնվազն 10 տարվա փորձ
- աշխատանքային խմբերում աշխատելու և դրանք ղեկավարելու առնվազն 10 տարվա փորձառություն
- Տվյալների վերլուծություններ իրականացնելու հատուկ փորձ՝ համապատասխան ոլորտներում որոշումների կայացմանն աջակցելու համար
- Հայերենի, Ռուսերենի և Անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, օրենքի, ենթաօրենսդրական փաստաթղթերի վերաբերյալ ստացված կարծիքների ամփոփման, դրանց մշակման, մոտեցումները հիմնավորելու կարողություններ, հաշվետվությունների նախապատրաստման հմտություններ, ճնշման տակ և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու ունակություններ: